



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2013թ. Տապալի 22 - ի թիվ 5/1

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ «ՈՌՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԵՎ «ԿՈԼԵԿՏՈՐԱԴՐԵՆԱԺԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՄԱԲՐՈՒՄ, ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ, ՊԱՀՊԱՆՈՒՄ, ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ, ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԵՎ ՈՐԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ» ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել ՀՀ տարածքային կառավարման մախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեում՝ «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» և «Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում, ընթացիկ նորոգում, պահպանում շահագործում, գրունտային ջրերի մակարդակի և որակի որոշման» ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԽԱՐՅԱՆ



Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊԴ խորհրդի
2013թ. մարտի 22 -ի թիվ 5/1 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՄԿԻՉ ՊԱԼԱՏ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ «ՈՌՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԵՎ «ԿՈՒԼԵԿՏՈՐԱԴՐԵՆԱԺԱՅԻՆ ՑԱՆՑԻ
ՄԱԶՐՈՒՄ, ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ, ՊԱՀՊԱՆՈՒՄ, ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ,
ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՄԱԿԱՐԳԱԿԻ ԵՎ ՈՐԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ» ԾՐԱԳՐԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ
ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2012թ. հունվարի 17-ի թիվ
1/5 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ ՀՀ տարածքային կառավարման ջրային տնտեսության
պետական կոմիտեի ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին
ֆինանսական աջակցության տրամադրման և կոլեկտորադրենաժային ցանցի
մաքրման, ընթացիկ նորոգման, պահպանման, շահագործման, գրունտային ջրերի
մակարդակի և որակի որոշման աշխատանքների նկատմամբ ուսումնասիրությունը:

Վերահսկողության առարկան՝ ՀՀ տարածքային կառավարման ջրային տնտեսության
պետական կոմիտեի ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին
տրամադրված ֆինանսական աջակցության միջոցները, դրանց օգտագործմանն
ուղղված գործարքներն ու ընթացակարգը, ինչպես նաև՝ կոլեկտորադրենաժային ցանցի
մաքրման, ընթացիկ նորոգման, պահպանման, շահագործման, գրունտային ջրերի
մակարդակի և որակի որոշման աշխատանքները:

Վերահսկողության օբյեկտները՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության
ջրային տնտեսության պետական կոմիտե:

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 23.01.2012-31.12.2012թթ.:

Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը՝ 2010 թվականի հունվարի 1-ից
մինչև ստուգման իրականացման ժամկետի ավարտը:

*Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, ընթացիկ նորոգման, պահպանման,
շահագործման, գրունտային ջրերի մակարդակի և որակի որոշման աշխատանքներ*

Վերահսկողության մեթոդաբանությունը՝

Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևը: Դիտարկման փուլում իրականացվել է ստացված տեղեկատվության ուսումնասիրություն, տարբեր տվյալների (քանակական և որակական) համադրման/համեմատման մեթոդներ: Ստուգման փուլում ստուգվել են «Մելիորացիա» ՓԲԸ-ի հաշվեկշիռն զտնվող կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, ընթացիկ նորոգման, պահպանման, շահագործման, գրունտային ջրերի մակարդակի և որակի որոշման ուղղությամբ 2010-2011թթ. իրականացված աշխատանքները: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են ստուգման ընթացքում արձանագրված փաստերը:

Վերահսկողության արդյունքները՝

Մաքրում և ընթացիկ նորոգում

«Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում» ծրագրով ՀՀ պետական բյուջեից 2010թ.-ին հատկացվել է 226.3 մլն դրամ, այդ թվում՝ ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքներին՝ 217.6 մլն դրամ: Աշխատանքներն իրականացվել են 16 կազմակերպությունների կողմից՝ թվով 16 կնքված պայմանագրերով, 216,694.13 հազ. դրամ ընդհանուր պայմանագրային գումարով: Աշխատանքներն իրականացվել են ներքոհիշյալ մարզերում՝ հետևյալ ծավալներով և գումարներով.

- Արարատի մարզ՝ մաքրում 80.6 կմ 120.866 հազ. խմ ծավալով, 94,037.044 հազ. դրամ գումարով,
- Արմավիրի մարզ՝ մաքրում 73.9 կմ 115.836 հազ. խմ ծավալով, 90,803.677 հազ. դրամ գումարով,
- Լոռու մարզ՝ մաքրում 13.6 կմ 24.03 հազ. խմ ծավալով, 17,395.224 հազ. դրամ գումարով,
- Գեղարքունիքի մարզ՝ մաքրում 10.0 կմ 18.959 հազ. խմ ծավալով, 14,458.185 հազ. դրամ գումարով:

Այսպիսով 4 մարզերում իրականացվել է մաքրում 178.1 կմ 279.691 հազ. խմ ծավալով, 216,694.13 հազ. դրամ ընդհանուր գումարով: 2010թ.-ին վերը նշված մաքրման աշխատանքների նախագծման համար ՀՀ պետական բյուջեի միջոցներից հատկացվել է 8.7 մլն դրամ:

«Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում» ծրագրով 2011թ. ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 226,300.0 հազ. դրամ, այդ թվում՝ ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքներին՝ 217,600.0 հազ. դրամ: Աշխատանքներն

իրականացվել են 15 կազմակերպությունների կողմից՝ թվով 16 կնքված պայմանագրերով, 209,793.821 հազ. դրամ ընդհանուր գումարով:

Աշխատանքներն իրականացվել են ներքոհիշյալ մարզերում՝ հետևյալ ծավալներով և գումարներով.

- Արարատի մարզ՝ մաքրում 58.699 կմ 113.681 հազ. խմ ծավալով, 96,836.189 հազ. դրամ գումարով,
- Արմավիրի մարզ՝ մաքրում 52.567 կմ 92.65 հազ. խմ ծավալով, 82,114.029 հազ. դրամ գումարով,
- Լոռու մարզ՝ մաքրում 11.03 կմ 23.56 հազ. խմ ծավալով, 18,312.646 հազ. դրամ գումարով,
- Գեղարքունիքի մարզ՝ մաքրում 7.35 կմ 13.254 հազ. խմ ծավալով, 10,785.258 հազ. դրամ գումարով:

Այսպիսով, ընդամենը 4 մարզերում իրականացվել են 129.646 կմ մաքրման և նորոգման աշխատանքներ՝ 243.145 խմ ծավալով, 20,8048.122 հազ. դրամ արժեքով: Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքների 2011թ. նախագծերի համար հատկացվել է 8,257.1 հազ.դրամ:

Պահպանում, շահագործում, գրունտային ջրերի մակարդակի և որակի որոշում

Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման, շահագործման, գրունտային ջրերի մակարդակի և որակի որոշման աշխատանքներն իրականացվել են «Մեխորացիա» ՓԲԸ-ի կողմից: Ծրագրին ՀՀ պետական բյուջեից 2010թ. հատկացվել է 93.7 մլն. դրամ:

Ծրագիրն ունի երեք ենթածրագիր.

ա/ հանրապետության կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման աշխատանքներ, ֆինանսավորումը՝ 66,900.0 հազ. դրամ:

Աշխատանքները ներառում են.

Արարատի և Արմավիրի մարզերի 7 համայնքներում 20.5 կմ ընդհանուր երկարությամբ դրենաժային ցանցերի վերականգնման, վերակառուցման, նորոգման և մաքրման աշխատանքները 49.253 հազ. խմ ընդհանուր ծավալով, վթարների վերացում կոլեկտոր 1-ի, Հրազդանի ձախափնյա, աջափնյա և թիվ 3 կոլեկտորի, NN 3, 10, 13 ջրհավաքների և մի քանի տասնյակ չորացուցիչների վրա:

Իրականացվել է հանրապետության 1051.828 կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի տեխնիկական վիճակի և դրենաժի տակ ընկած 34.3 հազ. հա չորացվող տարածքների հողերի մեխորատիվ վիճակի մշտական հսկողության ու ցանցերով հեռացվող ջրերի հաշվառումը:

բ/ «Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշում» ենթաժրագիր՝ 22,448.0 հազ. դրամ գումարով:

Արարատյան հարթավայրում տեղադրված 450 դիտողական հորատանցքերում գրունտային ջրերի մշտական դիտման արդյունքների հիման վրա 2010թ. վերջում որոշվել են դրենաժային համակարգերի 2011թ. մաքրման առաջնահերթությունը, կապված ինչպես գրունտային ջրերի մակարդակների, այնպես էլ հողերի երկրորդային աղակալման վտանգավորության հետ (սողայական կազմ ունեցող գրունտային ջրերով տարածքների չորացում):

Ծրագրի ընդհանուր նպատակն է՝ կատարվող համալիր հիդրոերկրաբանական և հողամելիորատիվ աշխատանքների արդյունքում տալ հողերի մելիորատիվ վիճակի գնահատականը և ներկայացնել միջոցառումների ծրագրեր՝ հողերի վիճակի բարելավման ու գյուղատնտեսական մշակաբույսերի բարձր և կայուն բերքատվության ապահովման համար:

գ/ Կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն՝ 4352.0 հազ. դրամ գումարով:

Ծրագրին ՀՀ պետական բյուջեից 2011թ. հատկացվել է 94,238.1 մլն դրամ:

Ծրագիրն ունի երեք ենթաժրագիր.

ա/ հանրապետության կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման աշխատանքներ, ֆինանսավորումը՝ 68,974.1 հազ. դրամ:

Աշխատանքները ներառել են.

Արարատի և Արմավիրի մարզերի 8 համայնքներում 22.381 կմ ընդհանուր երկարությամբ դրենաժային ցանցերի վերականգնման, վերակառուցման, նորոգման և մաքրման աշխատանքները 51.853 հազ. խմ ընդհանուր ծավալով, վթարների վերացում Հրազդանի ձախափնյա, աջափնյա և թիվ 6, Կոբու-Ապագա, Քոռու-Արաքս, Հրազդան-Արաքսի կոլեկտորների մի շարք ջրհավաքների և մի քանի տասնյակ չորացուցիչների վրա:

Իրականացվել է հանրապետության 1051.828 կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի տեխնիկական վիճակի և դրենաժի տակ ընկած 34.3 հազ.հա չորացվող տարածքների հողերի մելիորատիվ վիճակի մշտական հսկողության ու ցանցերով հեռացվող ջրերի հաշվառումը:

բ/ «Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշում» ենթաժրագիր՝ 22,000.0 հազ. դրամ գումարով:

Արարատյան հարթավայրում տեղադրված 455 դիտողական հորատանցքերում գրունտային ջրերի մշտական դիտման արդյունքների հիման վրա 2011թ. վերջում

որոշվել են դրենաժային համակարգերի 2012թ. մաքրման առաջնահերթությունը, կապված ինչպես գրունտային ջրերի մակարդակների, այնպես էլ հողերի երկրորդային աղակալման վտանգավորության հետ (սողայական կազմ ունեցող գրունտային ջրերով տարածքների չորացում):

զ/ Կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն՝ ծրագրով նախատեսված 3,264.0 հազ. դրամի փոխարեն փաստացի ծախսվել է 3,236.8 հազ. դրամ:

Ընտրանքային կարգով ուսումնասիրվել են կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման թվով 4 օբյեկտներ.

Ուսումնասիրմամբ պարզվեց.

1. «Չախափնյա Հրազդանի կոլեկտորի (ՉՀԿ) ջրհավաք 1-ը իր չորացուցիչներով, ՉՀԿ-ի չորացուցիչ 4, չորացուցիչ 5-ի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքներ» օբյեկտի աշխատանքները կատարվել են «Հիդրովերանորոգում» ԱԿ կողմից:

Աշխատանքների կատարողական ակտերը կազմել են 12,755.484 հազ. դրամ գումար: Օբյեկտում, համաձայն նախագծի, պետք է բարձվեր և տեղափոխվեր 585 խմ բերվածքներ և իրականացվեր II-ական հարթեցում, սակայն փաստացի տեղափոխվել է շուրջ 300 խմ բերվածքների բարձում և տեղափոխում, իսկ II -ական հարթեցում չի իրականացվել: Արդյունքում՝ ***չի իրականացվել 704.7 հազ. դրամ գումարի աշխատանք, որը ենթակա է վերականգնման:***

2. Կոլեկտոր Քուռու-Արաքսի ջրհավաք 2-ը իր չորացուցիչներով մաքրման և նորոգման աշխատանքները կատարվել են «Մել-Ման-Շին» ՍՊԸ կողմից:

Աշխատանքների կատարման համար ներկայացվել են կատարողական ակտեր՝ 11,526.234 հազ. դրամ գումարով, որից 2,924,9 հազ. դրամ հատկացվել է բերմաների հարթեցմանը:

Ուսումնասիրմամբ պարզվեց, որ 7176 խմ-ի փոխարեն փաստացի իրականացվել է շուրջ 5100 խմ հարթեցում: ***Տարբերությունը՝ 2076 խմ 846,2 հազ.դրամ ընդհանուր գումարով ենթակա է վերականգնման:***

3. Արարատի մարզի Մասիս քաղաքի չորացուցիչներ 117 և 19-ը իրենց չորացուցիչներով, Սիս գյուղի չորացուցիչ 2-ը և Արմավիրի մարզի կոլեկտոր 5-ի ջրհավաք 4-ում աշխատանքները կատարվել են «Աշոկ շինարարական ֆիրմա» ՍՊԸ-ի կողմից:

Աշխատանքների կատարողական ակտերը կազմում են 14,507.011 հազ.դրամ:

Ուսումնասիրմամբ պարզվեց, որ ներկայացված 3088 խմ բերվածքների բարձման և տեղափոխման փոխարեն փաստացի տեղափոխվել է շուրջ 2600 խմ:

Տարբերությունը՝ 488 խմ 805.2 հազ. դրամ ընդհանուր գումարով ենթակա է վերականգնման:

4. Կոլեկտոր Կոբու-Արդաշարը և Մրգաշատի ջրհեռ օբյեկտում աշխատանքները կատարվել են «Որդի Սիեր» ՍՊԸ կողմից: Աշխատանքների կատարողականը, համաձայն փաստաթղթերի, կազմում է 15,291.36 հազ. դրամ, որից 3,533,0 հազ. դրամը հատկացված է բերմաների հարթեցմանը: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ներկայացված 5608 խմ ներկայացված ծավալի փոխարեն հարթեցումը կազմել է շուրջ 5160 խմ: *Տարբերությունը կազմում է 448 խմ՝ 282.2 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:*

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ռոռզման ծառայություններ մատուցող ընկերություններին տրամադրված ֆինանսական աջակցություն

Վերահսկողության մեթոդաբանությունը՝

ՎՊ վերահսկողության ժամանակահատվածում ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչությունը ստուգումներ էր իրականացնում ջրօգտագործողների ընկերություններում (այսուհետ՝ ՋՕԸ), հետևաբար Վերահսկիչ պալատի կողմից իրականացվել է միայն դիտարկում, որի արդյունքում արձանագրվել են մի շարք ընթացակարգային խախտումներ:

Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել է դիտարկման և վերլուծության ձևը: Դիտարկման փուլում կատարվել է ՋՕԸ-ներից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն, կիրառվել են տարբեր տվյալների (քանակական և որակական) համադրման/համեմատման մեթոդներ, ուսումնասիրվել է նաև «Ջի Այ Սի Վոթըր Արմենիա» ջրի կառավարման համակարգչային ծրագիրը, կատարվել են ծրագրի տվյալների և ՋՕԸ-ների փաստաթղթային տվյալների համեմատություն:

Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են դիտարկման ընթացքում արձանագրված փաստերը:

Դիտարկման արդյունքները՝

Դիտարկման արդյունքում բացահայտվել են հետևյալ խախտումները և թերությունները՝

1. ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և ՋՕԸ-ների միջև կնքվել է ռոռզման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցություն տրամադրելու պայմանագիր՝ 4 տարի

ժամկետով: Պայմանագրի 3.3 կետով սահմանվել են ընկերության ոռոգելի հողատարածքների նվազագույն չափերը: ՋՕԸ-ների փաստաթղթերի, ինչպես նաև ջրի կառավարման ծրագրի ուսումնասիրությամբ պարզվել է, որ փաստացի ոռոգվել է ավելի քիչ հողատարածք, քան նախատեսված է պայմանագրով: Հատկանշական է, որ պայմանագրի 4.2 կետով նախատեսվել է, որ 3.3 կետի չկատարումը (պայմանագրով նախատեսված ոռոգելի հողատարածքների նվազագույն չափերը չպահպանելը) հիմք է հանդիսանում ֆինանսական աջակցության չափերի նվազեցման:

2. Վերոնշյալ պայմանագրի համաձայն՝ մատակարարված ջրի դիմաց վճարումները կատարվում են ՋՕԸ-ի ժողովի կողմից հաստատված ձևով (անդորագրերով՝ բանկային փոստային բաժանմունքի միջոցով): Սակայն, որոշ դեպքերում ՋՕԸ-ների աշխատակիցներն են (մելիորատորը, գանձապահը) գումարը հավաքում ջրօգտագործողներից և իրենք վճարում կատարում նրանց փոխարեն՝ խախտելով պայմանագրի դրույթները: Վերջիններս փաստացի իրականացնում են կանխիկ գանձման գործառույթ, ինչի իրավասությունը չունեն:

3. Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ՋՕԸ-ի նոր անդամից պետք է գանձվի մուտքի վճար, որի չափը սահմանում է ՋՕԸ-ի ընդհանուր ժողովը: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ ՋՕԸ-ների կողմից չի կատարվում օրենքի վերոնշյալ պահանջը: Մասնավորապես, վերահսկողության ժամանակահատվածում ՋՕԸ-ների ոչ մի նոր անդամից մուտքի վճար չի գանձվել, նույնիսկ ՋՕԸ-ների ընդհանուր ժողովները չունեն սահմանված ՋՕԸ-ի նոր անդամի մուտքի վճարի չափը:

4. Ջրի կառավարման համակարգչային ծրագրի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ այն դեպքում, երբ ջրօգտագործողն ունի տարբեր մշակաբույսերով մի քանի հողակտոր, ծրագրի միջոցով ջրի փաստացի ծավալը մուտքագրվել է միայն մեկ հողակտորի մասով: Բացի այդ, ջրի կառավարման ծրագիրը թույլ է տալիս բազայում առկա անմշակ հողակտորների վրա մուտքագրել տարեկան փաստացի մատակարարված ջուր և ձևավորել հասույթ անմշակ հողակտորների մասով: Այս ամենի արդյունքում ջրի կառավարման ծրագրով հստակ չի երևում ոչ փաստացի ոռոգված հողակտորների ստույգ քանակը, ոչ էլ՝ փաստացի օգտագործված ոռոգման ջրի ծավալները, ինչպես նաև հստակ չի երևում կոնկրետ մշակաբույսերով հողակտորների ջրման պարբերականությունները և քանակները:

5. Պատշաճ կերպով չի իրականացվում «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով գանձվող գումարների վերաբերյալ «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից ՋՕԸ-ներին տեղեկատվության տրամադրումը:

6. Ջրօգտագործողներին ոռոգման ջուր տրամադրվում է մոտավոր հաշվարկների հիման վրա (ջրի թողունակության և ջրման ժամկետի հիման վրա), ջրաչափական սարք (Յագուս) տեղադրվում է միայն ջրօգտագործողի պահանջի դեպքում:

7. Օրենքով նախատեսված է ՋՕԸ-ներում մի շարք ներքին կանոնակարգերի և գործավարական փաստաթղթերի պարտադիր առկայություն, սակայն դրանք հաստատված չեն և քացակայում են:

8. ՋՕԸ-ների կողմից իրականացվող ֆինանսական հոսքերի կանխատեսումների և տվյալ տարվա ընթացքում կատարված փաստացի ծախսերի միջև առկա են էական տարբերություններ: Մասնավորապես, կանխատեսվող էլեկտրաէներգիայի ծախսի և մեխանիկական եղանակով ձեռք բերված ջրառի ծախսերը զգալիորեն պակաս են կանխատեսվածներից: Տարվա ընթացքում տեղի են ունենում ծախսերի վերաբաշխումներ ՋՕԸ-ների տարբեր ծախսային հոդվածների միջև:

9. ՋՕԸ-ների կողմից իրականացվող ոռոգման ջրի պլանավորման գործընթացում առկա են էական շեղումներ տարեկան պլանային ջրի քանակի և փաստացի մատակարարված ջրի քանակի միջև: ՋՕԸ-ների անդամներին փաստացի մատակարարված ջրի քանակը զգալիորեն ցածր են պլանավորված ցուցանիշներից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- «Հիդրովերանորոգում» ԱԿ-ի կողմից չի իրականացվել շուրջ 300 խմ բերվածքների բարձումը և տեղափոխում, ինչպես նաև՝ II-ական հարթեցում, արդյունքում՝ 704.7 հազ. դրամ ենթակա է վերականգնման:
- «Մելմանշին» ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել շուրջ 2076 խմ բերմաների հարթեցում, արդյունքում՝ 846.2 հազ. դրամ ենթակա է վերականգնման:
- «Աշոկ շինարարական ֆիրմա» ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել 488 խմ բերվածքների բերման և տեխափոխման աշխատանքները, արդյունքում՝ 805.2 հազ. դրամ ենթակա է վերականգնման:
- «Որդի Միեր» ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել 448 խմ բերմաների հարթեցում, արդյունքում՝ 282.2 հազ. դրամ ենթակա է վերականգնման:
- «ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործավարական փաստաթղթերը չեն օգտագործվում, քացակայում են օրենքով նախատեսված ՋՕԸ-ների ներքին

կանոնակարգերը: Չեն պահպանվում օրենքով սահմանված ընկերության անդամներ դառնալու դրույթները:

- ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և ՋՕԸ-ների միջև կնքված ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցություն տրամադրելու պայմանագրերով ՋՕԸ-ների համար սահմանված պարտավորությունները լիարժեքորեն չեն կատարվում:
- Մատակարարված ջրի դիմաց վճարումները որոշ դեպքերում իրականացվում են ՋՕԸ-ների աշխատակիցների միջոցով, բանկային կամ փոստային բաժանմունքերի միջոցով իրականացնելու փոխարեն:
- ՋՕԸ-ների նոր անդամների մուտքի վճարների չափերը ընդհանուր ժողովների կողմից չեն հաստատվել և չեն գանձվել:
- Ջրի կառավարման համակարգչային ծրագրով նախատեսված չէ տարբեր մշակաբույսերով մի քանի հողակտորների ջրի փաստացի ծավալների մուտքագրումը:
- «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից սահմանված կարգով չեն իրականացվել ՋՕԸ-ների հետ կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորությունները՝ ոռոգման ջրի վճարների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մասով:
- ՋՕԸ-ների կողմից իրականացվող ֆինանսական հոսքերի կանխատեսումների և տվյալ տարվա ընթացքում կատարված փաստացի ծախսերի, ինչպես նաև պլանային ջրի քանակի և փաստացի մատակարարված ջրի քանակի միջև առկա են էական տարբերություններ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին՝

- Ապահովել չկատարված աշխատանքների պետական բյուջե գումարների վերականգնումը:
- Պատշաճ կերպով պահպանել «ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթները: Մասնավորապես, գործավարական փաստաթղթերի, ընկերության անդամներ դառնալու, վերստուգող հանձնաժողովների կողմից իրականացվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների և ներքին կանոնակարգերի առկայության մասով:

- Լիարժեքորեն կատարել ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և ՋՕԸ-ների միջև կնքված պայմանագրերով ՋՕԸ-ների համար սահմանված պարտավորությունները:
- Բացառել մատակարարված ջրի դիմաց վճարումների իրականացումը ՋՕԸ-ների աշխատակիցների միջոցով, և այն իրականացնել միայն բանկային կամ փոստային բաժանմունքների միջոցով:
- Հաստատել և գանձել ՋՕԸ-ների նոր անդամների մուտքի վճարները:
- Լրամշակել Ջրի կառավարման համակարգչային ծրագիրը՝ նախատեսելով տարբեր մշակաբույսերով մի քանի հողակտորների ջրի փաստացի ծավալների մուտքագրումը:
- Պատշաճ կերպով իրականացնել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից ոռոգման ջրի վճարների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման գործընթացը:

«ՀՀ Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի գ) ենթակետի համաձայն, մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատին տրամադրել գրավոր տեղեկություն՝ հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման վերաբերյալ:

Բացատրություն

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 22-ի թիվ 5/1 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության վերաբերյալ (ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե)

<p>ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ</p>	<p>ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)</p>	<p>Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն</p>
<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և ԶՕԸ-ների միջև կնքվել է ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցություն տրամադրելու պայմանագիր՝ 4 տարի ժամկետով: Պայմանագրի 3.3 կետով սահմանվել են ընկերությունների ոռոգելի հողատարածքների նվազագույն չափերը: ԶՕԸ-ների փաստաթղթերի, ինչպես նաև ջրի կառավարման ծրագրի ուսումնասիրությամբ պարզվել է, որ փաստացի ոռոգվել է ավելի քիչ հողատարածք, քան նախատեսված է պայմանագրով: Հատկանշական է, որ պայմանագրի 4.2 կետով նախատեսվել է, որ 3.3 կետի չկատարումը (պայմանագրով նախատեսված ոռոգելի հողատարածքների նվազագույն չափերը չպահպանելը) հիմք է հանդիսանում ֆինանսական աջակցության չափերի նվազեցման:</p>	<p>Պայմանագրային տարածքների մուտքագրված ջրի ծավալների վերլուծության արդյունքում ստացված փաստացի ոռոգված տարածքների պակաս քանակը հետևանք է սելավաջրերով վաղահաս մշակաբույսերի ամբողջությամբ ոռոգմամբ և անհատուց սելավաջրի չհաշվառմամբ: Հետևանք է նաև ջրօգտագործողների ընկերության համապատասխան մասնագետների կողմից իրականացված աշխատանքների թերությունների, այսինքն՝ հողատարածքը փաստացի ոռոգվել է, սակայն ջրի ծավալը մուտքագրվել է ջրօգտագործողի մեկ այլ հողամասի վրա, ուստի վերլուծության ընթացքում որոշակի ջրված հողամասեր դուրս են մնում հաշվարկային թվից: Պատճառներից է նաև լեռնային ջրօգտագործողների ընկերություններում հաճախ բարձր բնական խոնավության ապահովումը. տարածքները, որոնք նախատեսվում է ոռոգել, չեն ոռոգվում հաստատված բարձր բնական խոնավության պատճառով, սակայն ընկերությունն իրականացնում է ոռոգման համակարգի պահպանումը և նախապատրաստումը ջրապահանջի առկայության դեպքում՝ այն ապահովելու համար: Հաշվի առնելով այս և մի շարք այլ պատճառներ՝ ֆինանսական աջակցության չափերի նվազումն օբյեկտիվորեն չի կարող ուղիղ համեմատական լինել փաստացի ջրված տարածքների նվազմանը:</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և համապատասխան ջրօգտագործողների ընկերությունների միջև պայմանագրերը կնքվել են ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի N 1334-Ն որոշմամբ: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 13-ի N 1156-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 08.02.2007թ. N 1334-Ն որոշումը: Ընդ որում, 2012 թվականից սկսած ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն համապատասխան ջրօգտագործողների ընկերությունների հետ դրամաշնորհների պայմանագրեր կնքում է ՀՀ կառավարության 29.04.2010թ. N 566-Ն որոշմամբ հաստատված օրինակելի պայմանագրով: Միաժամանակ տարվել են աշխատանքներ, որպեսզի ջրօգտագործողների ընկերություններում համապատասխան մասնագետները պատշաճ և մանրակրկիտ իրականացնեն փաստաթղթերի կազմման և տվյալների մուտքագրման աշխատանքները:</p>
<p>Վերոնշյալ պայմանագրի համաձայն՝ մատակարարված ջրի դիմաց վճարումները կատարվում են ԶՕԸ-ի ժողովի կողմից հաստատված ձևով (անդորրագրերով՝ բանկային փոստային բաժանմունքի միջոցով): Սակայն, որոշ դեպքերում ԶՕԸ-ների աշխատակիցներն են (մելիորատորը, գանձապահը) գումարը հավաքում ջրօգտագործողներից և իրենք վճարում կատարում նրանց փոխարեն՝ խախտելով պայմանագրի</p>	<p>Այս դեպքերում մելիորատորն ուղղակի կատարում է փոստատարի գործառույթ, ջրօգտագործողին օգնելով գումարը փոստային բաժանմունք հասցնելու հարցում, ջրօգտագործողի անունով փոստային բաժանմունքում իրականացված վճարի փոստային կամ բանկային կտրոնը տրամադրվում է ջրօգտագործողին: Նշվածը կանխիկ գանձման իրականացման գործառույթ բարդ է դիտարկել:</p>	<p>Ջրօգտագործողների ընկերություններին առաջարկվել է կազմակերպել և ջրօգտագործողների հետ տանել աշխատանքներ նշված երկույթի նվազման դիմամիկա ապահովելու նպատակով:</p>

<p>դրույթները: Վերջիններս փաստացի իրականացնում են կանխիկ գանձման գործառույթ, ինչի իրավասությունը չունեն:</p>		
<p>Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ԶՕԸ-ի նոր անդամից պետք է գանձվի մուտքի վճար, որի չափը սահմանում է ԶՕԸ-ի ընդհանուր ժողովը: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ ԶՕԸ-ների կողմից չի կատարվում օրենքի վերոնշյալ պահանջը: Մասնավորապես, վերահսկողության ժամանակահատվածում ԶՕԸ-ների ոչ մի նոր անդամից մուտքի վճար չի գանձվել, նույնիսկ ԶՕԸ-ների ընդհանուր ժողովները չունեն սահմանված ԶՕԸ-ի նոր անդամի մուտքի վճարի չափը:</p>	<p>Դիտողությունը, նոր անդամներից մուտքի վճարի գանձման վերաբերյալ, ընդունված է:</p>	<p>Տարվել են աշխատանքներ՝ թերությունը շտկելու ուղղությամբ:</p>
<p>Ջրի կառավարման համակարգային ծրագրի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ այն դեպքում, երբ ջրօգտագործողն ունի տարբեր մշակաբույսերով մի քանի հողակտոր, ծրագրի միջոցով ջրի փաստացի ծավալը մուտքագրվել է միայն մեկ հողակտորի մասով: Բացի այդ, ջրի կառավարման ծրագիրը թույլ է տալիս բազայում առկա անմշակ հողակտորի վրա մուտքագրել տարեկան փաստացի մատակարարված ջուր և ձևավորել հատույթ անմշակ հողակտորների մասով: Այս ամենի արդյունքում ջրի կառավարման ծրագրով հստակ չի երևում ոչ փաստացի ոռոգված հողակտորների ստույգ քանակը, ոչ էլ՝ փաստացի օգտագործված ոռոգման ջրի ծավալները, ինչպես նաև հստակ չի երևում կոնկրետ մշակաբույսերով հողակտորների ջրման պարբերականությունները և քանակները:</p>	<p>Ջրի կառավարման ծրագիրն ի սկզբանե ունեցել է և ունի մի քանի տարբեր հողամասերի վրա օգտագործված ոռոգման ջրի մուտքագրման տեխնիկական հնարավորությունը: Թերությունը փաստացի իրականացվող մուտքագրման աշխատանքների մեջ է: Որպես “անմշակ” հողամասերի վրա մուտքագրված ջրի ծավալի վերաբերյալ՝ ծրագրում առկա է ջրի ծավալի մուտքագրման սահմանափակումը “անմշակ” հողամասերի վրա, սակայն չկա սահմանափակում այն դեպքերում, երբ մշակաբույսը խմբագրվում է “անմշակ”-ի արդեն իսկ մուտքագրված ծավալի դեպքում: Ստացվում է, որ “անմշակ” հողամասի վրա առկա է մուտքագրված ջրի ծավալ, որը մուտքագրվել է, երբ հողամասը չի եղել “անմշակ”: Այստեղ սահմանափակում չի դրվում, քանի որ իրականության մեջ օբյեկտիվորեն հնարավոր են այդպիսի դեպքեր:</p>	<p>Տարվել են աշխատանքներ, որպեսզի ջրօգտագործողների ընկերություններում համապատասխան մասնագետները պատշաճ և մանրակրկիտ իրականացնեն փաստաթղթերի կազմման և տվյալների մուտքագրման աշխատանքները:</p>
<p>Պատշաճ կերպով չի իրականացվում “Հայփոստ” ՓԲԸ-ի միջոցով գանձվող գումարների վերաբերյալ “Հայփոստ” ՓԲԸ-ի կողմից ԶՕԸ-ներին տեղեկատվության տրամադրումը:</p>	<p>Ջրօգտագործողների ընկերություններն ունեն տեխնիկական բոլոր հնարավորությունները “Հայփոստ” ՓԲԸ-ին լրացուցիչ տեղեկատվություններ տրամադրելու և ընդունելու համար: Խոչընդոտը կայանում է “Հայփոստ” ՓԲԸ-ի ծրագրային ապահովման փաթեթների սահմանափակ տեխնիկական հնարավորությունների մեջ:</p>	<p>Առաջարկվել են ջրօգտագործողների ընկերություններին կազմակերպել քանակցություններ “Հայփոստ” ՓԲԸ-ի մասնագետների հետ՝ խնդրին լուծում տալու նպատակով:</p>
<p>Ջրօգտագործողներին ոռոգման ջուր տրամադրվում է մոտավոր հաշվարկների հիման վրա (ջրի թողունակության և ջրման ժամկետի հիման վրա), ջրաչափական սարք (Յագուս) տեղադրվում է միայն ջրօգտագործողի պահանջի դեպքում:</p>	<p>Ջրօգտագործողների ընկերությունները չունեն մարդկային, տեխնիկական և ֆինանսական հնարավորություններ, շուրջ 600 հազ. հողակտորի վրա յուրաքանչյուր ջրման ընթացքում փաստացի ջրաչափություն իրականացնելու: Հաշվարկային մեթոդները նույնպես ընդունված մոտեցումներ են սպառված ջրի ծավալի որոշման համար:</p>	<p>Ներկայումս ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման առանձին տարածքներում անհրաժեշտության դեպքում իրականացվում են փաստացի ջրաչափություններ: Միաժամանակ իրականացվում են փաստացի ջրաչափության պիլոտային ծրագրեր: Առաջիկա վարկային ծրագրում դրված է նաև ջրաչափությունն ուժեղացնելու և խորացնելու խոշոր պիլոտային ծրագիր: Տարվում են աշխատանքներ փաստացի ջրաչափության ծավալների և ճշտության ավելացման ուղղությամբ:</p>
<p>Օրենքով նախատեսված է ԶՕԸ-ներում մի շարք</p>	<p>Դիտողությունը, ներքին կանոնակարգերի և</p>	<p>Մշակվում են ուղեցույցեր ներքին կանոնակարգերի ստեղծման,</p>

<p>ներքին կանոնակարգերի և գործավարական փաստաթղթերի պարտադիր առկայություն, սակայն դրանք հաստատված չեն և բացակայում են:</p>	<p>գործավարական փաստաթղթերի վերաբերյալ, ընդունված է:</p>	<p>հաստատման և կիրառման ուղղությամբ:</p>
<p>ԶՕԸ-ների կողմից իրականացվող ֆինանսական հոսքերի կանխատեսումների և տվյալ տարվա ընթացքում կատարված փաստացի ծախսերի միջև առկա են էական տարբերություններ: Մասնավորապես, կանխատեսվող էլեկտրաէներգիայի ծախսի և մեխանիկական եղանակով ձեռք բերված ջրառի ծախսերը զգալիորեն պակաս են կանխատեսվածներին: Տարվա ընթացքում տեղի են ունենում ծախսերի վերաբաշխումներ՝ ԶՕԸ-ների տարբեր ծախսային հոդվածների միջև:</p> <p>ԶՕԸ-ների կողմից իրականացվող ոռոգման ջրի պլանավորման գործընթացում առկա են էական շեղումներ տարեկան պլանային ջրի քանակի և փաստացի մատակարարված ջրի քանակի միջև: ԶՕԸ-ների անդամներին փաստացի մատակարարված ջրի քանակը զգալիորեն ցածր են պլանավորված ցուցանիշներից:</p>	<p>Էլ. էներգիայի չափաքանակների և մեխանիկական ջրառի ծավալները կանխատեսվում և պլանավորվում են՝ հաշվի առնելով նախորդ տարիների փաստացի տվյալները՝ միջին ջրապահովվածության տարիների համար: Պլանավորման ընթացքում հաշվի չեն առնվում խոնավ, ջրառատ և սելավաջրերով հարուստ տարիները, քանի որ հնարավոր չէ կանխատեսել այդ հանգամանքը և խիստ ռիսկային է նման պլանավորման իրականացումը: 2012 թվականի ընթացքում քաղաքական և կարճաժամկետ են եղել սելավային հոսքերը, որի հետևանքով ոռոգում-ջրառ ընկերություններից փաստացի և պլանային մեխանիկական ջրառների ծավալները շեղվել են ընդամենը 1.7%, էլ. էներգիայի ծավալները՝ 5.7%-ով, ինչը եղանակային անկանխատեսելի պայմաններում լավ ցուցանիշ է:</p> <p>2012 թվականի փաստացի ջրամատակարարումը դաշտում պակաս է եղել պլանավորված ծավալից մոտ 4%-ով, ինչը լավ ցուցանիշ է: Այս տարբերությունը կարող էր ավելի փոքր լիներ, եթե հաշվառվեին ապրիլ ամսին ջրօգտագործողներին անհատույց մատակարարված սելավաջրի փոքրածավալ քանակը:</p>	<p>Ոռոգման ոլորտում իրականացվող բարեփոխումները շարունակական բնույթ են կրում և պահանջում են ամենօրյա հսկողություն ու օպերատիվ արձագանք առաջացած խնդիրներին: Զրօգտագործողների ընկերությունների կայացմանը զուգընթաց առաջանում է նաև կառուցվածքային բարեփոխումների անհրաժեշտություն, ինչպես նաև կազմակերպչական համալիր միջոցառումների կիրառում՝ աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով:</p> <p>Զրօգտագործողների ընկերություններում պարբերաբար կատարվում են ուսումնասիրություններ և վերլուծություններ: Ուսումնասիրությունները և վերլուծությունները կատարվում են, մասնավորապես, ընկերությունների ֆինանսատնտեսական կայունության, տեխնիկական հնարավորությունների, ոռոգման ջրի մատակարարման արդյունավետության, մատակարարված ջրի հաշվառման բարելավման, ինչպես նաև կառուցվածքային փոփոխությունների ուղղություններով: Արդյունքում անցած տարիների ընթացքում սկզբնավորման պահից թվով 54 ջրօգտագործողների ընկերություններ վերակազմակերպվել են 42 ջրօգտագործողների ընկերությունների: Որպես կառուցվածքային բարեփոխումների շարունակություն՝ 2013 թվականին ևս 4 ջրօգտագործողների ընկերություններ («Կոտայք» և «Զրվեժ-Ձորաղբյուր», ինչպես նաև «Շենիկ» և «Քարակերտ») վերակազմակերպվել են միացման ձևով, իսկ «Ագատ» և «Արտաշատ» ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Միաժամանակ «Մասիս» ջրօգտագործողների ընկերության վարչական խորհուրդը քննարկել է տնօրենի կադրային փոփոխության հարց:</p>
<p>«Հիդրովերանորոգում» ԱԿ-ի կողմից չի իրականացվել շուրջ 300 խմ բերվածքների բարձում և տեղափոխումը, ինչպես նաև՝ 11-ական հարթեցում, արդյունքում՝ 704.7 հազ. դրամ ենթակա է վերականգնման:</p>		
<p>«Մեյմանշին» ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել շուրջ 2076 խմ բերվածքների հարթեցում, արդյունքում՝ 846.2 հազ. դրամ ենթակա է վերականգնման:</p>	<p>“Աշոկ շինարարական ֆիրմա” ՍՊԸ-ն, “Հիդրովերանորոգում” ԱԿ-ն, “Մեյ-Ման-Շին” ՍՊԸ-ն և “Որդի Մհեր” ՍՊԸ-ն ընդունել են ակտով արձանագրված համապատասխան գումարների ՀՀ պետական բյուջե վերականգնման պահանջը:</p>	<p>“Աշոկ շինարարական ֆիրմա” ՍՊԸ-ն, “Հիդրովերանորոգում” ԱԿ-ն, “Մեյ-Ման-Շին” ՍՊԸ-ն և “Որդի Մհեր” ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջե են փոխանցել ակտով արձանագրված համապատասխան գումարները:</p>
<p>«Աշոկ շինարարական ֆիրմա» ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել 488 խմ բերվածքների բերման և տեղափոխման աշխատանքները, արդյունքում՝ 805.2 հազ. դրամ ենթակա է վերականգնման:</p>		
<p>«Որդի Մհեր» ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել 448 խմ բերվածքների հարթեցում, արդյունքում՝ 282.2 հազ. դրամ ենթակա է վերականգնման:</p>		